

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

Ե Խ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ր Դ Ո Յ

Ե Ի

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԵՒ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԵՐՈՒ
ՆԻՒԹԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆՑ ԳՐԶՈՅԿ

1974 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Ն Ե Ր Կ ա յ ա ց ո ւ ա ծ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀ. ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Տ Ե Ղ Ի ո ւ ն Ե ց ա ծ

23 ՓԵՏՐՈՒԱՐ 1975

*

* *

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ

ՀՈԳՇ. Տ. ՇՆՈՐՀՔ ՎՐԴ. ԳԱՍԳԱՐԵԱՍԻ

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹՅՈՒՆԸ

1 9 7 4

1974 Մայիս 13ին մեզի ուղղուած պաշտօնական նամակով մը Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան կը հաստատէր իր նախապէս առած որոշումը թէ՛ Գանատայի Առաջ. Փոխ. պաշտօնը Թափուր ըլլալով մեզ պիտի նշանակէ այդ պաշտօնին, միաժամանակ վստահելով հովուութիւնը Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ:

Տրուած ըլլալով որ մեր նախորդ ծուխին, այսինքն Ուստորի համայնքին մեզ փոխարինող հովիւ մը չէր գտնուած, մեր փոխադրութիւնը յետաձգուեցաւ մինչեւ Սեպտ. 15 հաւանու թեամբը Առաջնորդ Սրբազան Հօր եւ փոխադարձ համաձայնու թեամբ զոյգ ծխական Խորհուրդներուն եւ մեր միջեւ: Հետեւաբար, Կիրակի օր, 1974 Սեպտեմբեր 15ին Խաչվերացի Տօնին հանդիսաւոր Ս. Գատարագի մատուցմամբ պաշտօնապէս ձեռնարկած եղանք մեզի վստահուած այս հսկայ գաղութի պարտակաւ նութիւնը:

Առաջին առիթով մեր ուշադրութիւնը կեդրոնացուցինք ծառայողական գաղութիս զանազան կազմակերպութեանց եւ քոյր Միութեանց ներկայացուցիչներուն հետ եւ այս դիտաւորութեամբ ներկայ եղանք այն քոյր ձեռնարկներուն, որոնց հրաւիրուեցանք յամախ:

Իր կարգին սկսանք յարաբերութիւն մշակել քոյր եկեղեցիներու հոգեւոր առաջնորդներուն հետ զոր կը պահենք մինչեւ այսօր, սիրալիր եւ գործակցելու փոխադարձ պատրաստակամութեամբ: Այդ եկեղեցիներն են՝ Հայ Կաթողիկէ, Հայ Աւետարանական, Յոյն Օրթօտօքս եւ միւս Օրթօտօքս եկեղեցիները, ինչպէս նաեւ Գանատացի Կաթողիկէ եկեղեցիները:

Առաջին հերթին յիշենք այստեղ թէ քաղաքիս մէջ հաստատուած է Էկումէնիկ Կեդրոն անունով գրասենեակ մը ընդհ. Գանատայի համար որուն տնօրէնն է Գերշ. Հայր Իրենէ Դոպիէն, որ նշանակուած է տեղւոյս Կաթողիկէ Արքեպիսկոպոսարանի -Արշէվէշէ- կողմէ: Գերշ. Վարդապետը ազնուութիւնը ունեցաւ սեղանով մը պատուելու մեզ Հոկտ. 4ին երբ առիթը ունեցանք ծանօթանալու, եւ ուղիղ լուսաբանութիւններ տալու մեր եկեղեցւոյ եւ գաղութի առնչութեամբ, որոնք նորութիւններ էին եւ կը գոհացնէին իր հետաքրքրութիւնը: Յետայնու Էկումէնիկ Կեդրոնը ամէն առիթ գործածեց մեզ յարաբերութեանց մէջ դնելու զանազան եկեղեցիներու հետ եւ մեր անունը տալով յամախակի առիթներ ստեղծեց որ մենք թէ՛ հրաւիրուինք քարոզելու եւ դասախօսելու տարբեր տեղեր, թէ՛ ալ զանազան հաստատութիւններէ այցելութիւններ ընդունեցանք որոնք ծանօթանալ կը փափաքէին Հայց. Եկեղ. ծէսն ու մըշակոյթը:

Բոլոր այս առիթները ի հարկէ սքանչելի պատեհութիւններ կը նկատենք ճանչցնելու զմեզ մեր անցեալի եւ ներկայի ազգային ու եկեղեցական զանազան մարզերով:

Նոյնպէս ջերմ յարաբերութեան մէջ ըլլալով մեր համայնքի անդամներուն՝ արդէն բարեկամ, Ղպտի Կաթողիկէ Եկեղեցւոյ հովիւ Գերյ. Հայր Գորիաթին, որուն կողմէ քանիցս առիթը ունեցանք հիւրասիրուելու, Սեպտ. 22ին յատուկ հրաւերով մը մասնակցեցանք այն մեծ ընդունելութեան զոր կազմակերպուած էր Ղպտոց Աղեքսանդրիոյ Պատրիարք Ստեփաննոս Կարտինալի այցելութեան եւ իրենց համայնքի մշակութային կեդրոնի բացումին առթիւ, ուր ներկայ էին նաեւ Պետական եւ եկեղեցական բարձրաստիճան հիւրեր:

Մեծ մոռացութիւն մը պիտի ըլլայ եթէ չյիշենք մեր սիրալիր յարաբերութիւնը Վերապատուելի Հէրըլտ Թոմսընի հետ, որուն համայնքին հետ միասին կը բաժնենք այս Տաճարը, պաշտելու մեր բոլորին Արարիչը եւ Փրկիչը Քրիստոս:

1974 Նոյ. 20ին ներկայացանք Մոնթրէալի քաղաքապետ Պ. Ժան Տրափօյի, ընկերակցութեամբ Եկեղեցւոյս Ատենապետին Պ. Լ. Գործեանի, Դիւանապետին Պ. Վ. Բէթլիի եւ Տիկնանց Օժանդակի Ատենապետուհի Տկն. Ա. Գուլումճեանի, ներկայացնելով մեր եւ մեր զաղութի մեծարանքն ու բարեմաղթութիւնները իր վերընտրութեան առիթով իբր քաղաքապետ Մոնթրէալի:

Մեր եկեղեցւոյ պաշտամունքները կատարեցինք բնականակերպով ամէն Կիրակի առաւօտ Ս. Պատարագի մատուցմամբ. յատուկ հոգածութիւն եւ շեշտ դնելով քարոզխօսութեան, հաւատացեալներու հոգեւոր դաստիարակութեան նպաստելու մտահոգութեամբ: Մեր ուշադրութենէն չվրիպեցաւ այն պարագան թէ քաղաքիս մէջ բնակութիւն հաստատելով մեր եկեղեցին կը հաճախեն երկու հոգեւորականներ, յանձին Տ. Սահակ Ա. Բճնյ. Պալեան եւ Տ. Յուսիկ Բճնյ. Նշանեան. հրաւիրեցինք զիրենք որ եկեղեցւոյ պաշտամունքներուն եւ խորհրդակատարութեանց առընթեր նաեւ Ս. Պատարագ մատուցանելու ազատ զգան երբ եւ կամենան, առանց Առաջնորդարանի հաստատումին, ամբողջովին մեր պատասխանատուութեամբ եւ ծիսական Խորհուրդի համաձայնութեամբ: Ուրախ ենք որ հակառակ իրենց յառաջացած տարիքին իրենց առողջութեան ներած չափով կ'օժանդակեն եկեղեցւոյ բոլոր արարողութեանց, պայծառացնելու մեր եկեղեցին, իրենց սիրայօժար ծառայութեամբը:

Հոգեւորականներուն հետ միասին մեր շնորհակալութիւնն ու զօհունակութիւնը կուզենք յայտնել բոլոր անոնց, որոնք կը մասնակցին Ս. Խորհուրդի սպասաւորութեան, Սարկաւազներ, Ուրարակիրներ, դպիրներ եւ յատկապէս անոնց ղեկավարները Պ. Կարպիս Կիրակոսեանին եւ Յակոն Յնձալեանին:

Թէեւ միայն Սեպտ. ամիսէն մենք սկսանք մեր պաշտօնավարութեանը, սակայն եկեղեցւոյս տօմարներուն համաձայն արձանագրութիւնները ցոյց կուտան թէ 1974 տարւոյն մէջ եղած են 40 Մկրտութիւններ, 36 պսակներ եւ 15 Թաղումներ: Աւելորդ չենք նկատէր հոս յիշել եկեղեցւոյս գրասենեակային աշխատութեանց մասին, որ Մոնթրէալի մեր համայնքին նման մեծ զաղութի մը մէջ ծաւալուն զործ մըն է, զոր կը կատարուի

գնահատելի բծախնդրութեամբ, շնորհիւ Պրն. Վահէ Բէթլիի խղովարան ու բոլորանուէր ջանքերուն:

Մեր հովուական պաշտօնի պարտականութիւններէն առաջնակարգը կը նկատենք ինքնին հովուութիւնը, այսինքն ժողովուրդին հովիւը ըլլալու պարագան: Այս պատճառով մեր ժամանումէն յետոյ առաջին իսկ հերթին շեշտեցինք թէ ինչ կը նշանակէ հոգեւոր հովիւ եւ որքան անհրաժեշտ է հօտի եւ հովիւի միջեւ հաղորդակցութիւն ստեղծելը: Ժողովուրդը յարգելով ու ակնածելով հանդերձ հոգեւորականի հանգամանքը կամ եկեղեցական պատշաճութիւնները, պէտք է ազատ զգայ մօտենալու, խօսելու, խորհրդակցելու, գաղափարներ փոխանակելու, լուսարանութիւններ քաղելու որեւէ հարցերու շուրջ. այս բոլորը, որեւէ ժամանակ որ կը կամենայ կամ հարկը կ'ստեղծէ, այն կատարեալ վստահութեամբ թէ պաշտօնական հանգամանքներէն դուրս հոգեւոր հովիւը, է նաեւ իր հոգեւոր հայրը, իր մեծ եղբայրը, հոգեւոր բարեկամը եւ մանաւանդ խոստովանահայրը: Հոգեւոր այս կապն է որ կը խարսխէ ու կամրացնէ քրիստոնեայ համայնքի մը փոխյարաբերութիւնները իրարու հանդէպ որպէս ընտանիքի անդամներ, եւ իրարմով՝ Մայր Եկեղեցիին, որպէս մէկ ընտանիք եւ ամբողջութիւն: Այս բոլորը ի մտի ունենալով մեր կարելիութեան սահմանին մէջ ջանացինք նաեւ մենք յառաջ երթալ եւ մօտենալ մեր ժողովուրդին այ ցելելով զիրենք ըլլայ բնակարաններուն մէջ թէ հիւանդանոցները կեանքի ամէն պարագաներու առթիւ: Գիտենք որ տակաւին գործի քառորդն իսկ չէ կատարուած նկատելով թէ դաշտի ընդարձակութիւնը եւ թէ մեր նորեկ ըլլալը Մոնթրէալի մէջ, բայց յոյսով ենք որ պիտի կարենանք շարունակել մեր աշխատանքը իբր հովիւ հոգեւոր եթէ մեր հսկողութենէն դուրս արգելքներ չի ստեղծուին:

Այս գաղութի մտահոգիչ պարագաներէն մէկն է դպրոցի անհետաձգելի ստիպողութիւնը որ արդէն ուշացած կը նկատենք: Մեր պատմութեան մէջ չկայ տեղ մը ուր առանց դպրոցի համայնք հաստատուած ըլլայ, իսկ եթէ բացառաբար եղած ալ է, այդ համայնքը պատմութիւն արձանագրելու արժանի չէ եղած եւ հազիւ ժամանակաւոր տեւողութիւն մը ունեցած է: Ա'աղօթենք որ այս խիստ անհրաժեշտ հարցը ի մօտոյ իրականանայ այս գաղութին մէջ պատկարելի հիմնարկութեամբ մը. ժամանակ է որ խուսաբինք միջակութիւններէ եւ մանր հաշիւներով ժամավաճառ ըլլալէ: Կը նախատեսենք ու կը փափաքինք շատ մը ծրագիրներ իրագործել սակայն առ այժմ մեզի միայն հնարաւորութիւն ընծայուած է շաքաթօրեայ վարժարանին մէջ, ուր մեր մասնակցութիւնը կը բերենք կրօնաբարոյական նիւթեր դասաւանդելով:

Մեր մասնակցութիւնը անխաբան կերպով նաեւ բերած ենք գանազան ժողովներու, յատկապէս նախագահելով ծխական Խորհուրդի բոլոր նիստերուն, տալով մեր թելադրութիւններն ու ցուցմունքները: Նոյնպէս եկեղեցւոյս երիտասարդացի ժողովներուն յամախ մասնակցելով, եղած ենք մեր երիտասարդներուն կողքին:

„Բուրաստան“ ամսաթերթը որ եկեղեցւոյս ծխական հրատարակութիւնն է, վերջերս յանձնուեցաւ յանձնախումբի մը, մեր գլխաւորութեամբ, որպէսզի աւելի բծախնդրութեամբ հոգացուի անոր հրատարակութիւնը:

Մեր ժամանակի հնարաւորութեան չափով, սոյն թերթին համար եւս կը ջանանք գրութիւններ պատրաստել:

Մոնթրէալի մեր գաղութը գաղթաշխարհի մէջխիստ կարեւոր դիրք մը կը զբաւէ արդէն, որ պէտք է պատկանելի տեղ մը ունենայ պատմութեան մէջ: Ներկայ շրջանը կրնայ մակառոգրական ժամանակ մը նկատուիլ երբ ապագայի հունտերը կը ցանուին այսօր որպէսզի բարգաւաճ ու բեղուն հունձք մը ունենայ գաղութը յետագային: Այս մասին կարելի է շատ մը թելադրութիւններ ընել, բայց պիտի բաւականանք հոս մեր խօսքը աւարտել եւ ջանալ գործունէութեամբ ու բոլորի գործակցութեամբ օգտակար ձեռնարկներ արձանագրել ի պատիւ եւ ի պարծանս Մոնթրէալահայ անուսին որպէսզի պատմութեան առջեւ եւ յաջս օտարներուն մերմակերես ներկայանանք ինչպէս անցեալին:

Հուսկ ուրեմն մեր շնորհակալութիւնը եւ օրհնութիւնը կը հաղորդենք բոլոր անոնց, որոնք անցեալին աշխատած են ու ապագային պիտի գործեն նուիրական ու ազգային ազնիւ զգացումներով: Կը հայցենք Աստուծոյ օրհնութիւնները բոլորին համար եւ կը մնանք, աղօթարար՝

ՇՆՈՐՀԸ ՎՐԴ. ԳԱՍԴԱՐԵԱՆ

*
* *

ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

ԵՒԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1974 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԳՈՐԵՈՒՆԷՈՒԹԵԱՆ

(Կարդացուած 23 Փետրուար 1975ի Տարեկան ժողովին)

* * *

Յունուար 27, 1974 թ.ին գումարուած Տարեկան ընդհանուր անդամական ժողովէն ընտրուած անդամներով օժտուած ծխականխորհուրդս իր անդրանիկ նիստը գումարելով Փետրուար 4, 1974ին կազմեց իր ղիւանը հետեւեալ կերպով՝

- | | | |
|-----------------------------|---|---------------------|
| Պրն. ԼԵԼՈՆ Գործեան | ՝ | Ատենապետ |
| Տոքթ. Յարութիւն Արզումանեան | ՝ | Փոխ Ատենապետ |
| Պրն. Վահէ Բէթլի | ՝ | Ատենադպիր-ղիւանապետ |
| Պրն. Առաքել Առաքելեան | ՝ | Փոխ Ատենադպիր |
| Պրն. Ռուբէն Արսէվէր | ՝ | Գանձապահ |
| Պրն. Միսաք Կուտսուզեան | ՝ | Հաշուապահ |
| Պրն. Գէորգ Փելթեքեան | ՝ | Խորհրդական |
| Տոքթ. Նայիրի Գալընեան | ՝ | Խորհրդական |
| Տոքթ. Հրայր Տէրգէորգեան | ՝ | Խորհրդական |

Այս շրջանին մէջ ծխական Խորհուրդս գումարեց 42 ժողովներ:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՓՈՓՈՒՍՈՒԹԻՒՆ:--

Այս տարեշրջանի սկզբնաւորութեան Արժ. Տէր Մամիկոն Բհնյ. Ոսկանեան շարունակեց իր պաշտօնին մինչեւ Սեպտ.ի վերջաւորութեան: Տէր Հայրը իր իսկ փափաքով եւ Առաջնորդարանի կարգադրութեամբ փոխադրուեցաւ կրկին նիւ Եորք: Դարձեալ Առաջնորդ Սրբազան հօր քարեհաճ կարգադրութեամբ որպէս հովիւ պաշտօնի նշանակուեցաւ Հոգշ. Տ. Ենորհք Վրդ. Գասպարեան, միանգամայն կաշխատելով Առաջ. Փոխ. Գանձապահ: Ենորհք Վարդապետ իր նոր պաշտօնին ձեռնարկեց Սեպտ.15էն սկսեալ: Արժ. Տ. Սահակ Ա. Բհնյ. Պալեան եւ վերջերս քաղաքս գալով հաստատուած Արժ. Տ. Յուսիկ Բհնյ. նշանեան որպէս օգնական հոգեւորականներ բերին իրենց մասնակցութիւնը եկեղեցւոյ արարողութեանց եւ Խորհրդակատարութեանց պայծառացնելով ու շէնցնելով մեր գեղակերտ տաճարը:

Հոգշ. Հայր Սուրբի ժամանումէն ասդին մեծապէս զարկ տրուեցաւ էկոմէնիկական շարժումներուն եւ մեր Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցին ու համայնքը տակաւ սկսան ծանչցուիլ հաչս օտարներէ: Հոս կարժէ անդրադառնալ նաեւ Հայր Սուրբին կուռ եւ հոգշունչ քարոզներուն մասին, որոնք մեծապէս կը գնահատուին բոլորէն:

ԴՌՈՒԱՍԳԵՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԵՈՒՆԷՈՒԹԻՒՆ:--

Այս տարեշրջանին ամբողջութեամբ ղիւանապետի պաշտօնը միանգամայն վարեց Պրն. Վահէ Բէթլի որուն շնորհիւ Եկեղեցւոյ գրասենեակը միշտ բաց մնաց որմէ օգտուեցան բազմաթիւ ազգայիններ ներկայացնելով իրենց խնդրանքները: Պրն. Բէթլիի ներկայութիւնը սոյն պաշտօնին վրայ եւ իր ունեցած հմտութիւնն ու փորձառութիւնը մեծապէս նպաստեցին եկեղեցւոյ ընթացիկ գործունէութեանց կատարումին:

ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ՀԱՐՑ:-

Ինչպէս մեր անդամներուն ծանօթ է, Եկեղեցւոյս համայնքը ունէր երկու ազգապատկան հողամասեր:

Ա- Փարք պողոտայի վրայ նախապէս Հայ կեդրոն գործածուած շէնքի հողամասը:

Բ- Հանրի Պուրասա պողոտայի վրայ գտնուող, եկեղեցւոյ շինութեան համար գնուած հողամասը:

Վերոյիշեալներէն առաջինը վերջապէս ծախուեցաւ Յունիս 27, 1974 թուականին 45.000 Տոլարի փոխարէն:

Գալով երկրորդ հողամասին, ինչպէս մեր անդամները կը յիշեն, փոխանցուած կը նկատուէր Հ.Բ.Ը.Մ. Մոնթրէալի Մասնաճիւղին մարզադահլի շինութեան համար: Սակայն, հակառակ թափուած ջանքերուն կարելի չեղաւ փոխանցումը կատարել: Վերջապէս ճիւղական Խորհուրդս որոշեց այդ մէկը եւս ծախել:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ:-

Մոնթրէալի հայութիւնը քախտաւորութիւնը ունեցաւ այս տարեշրջը - ջանի վախճանին մօտ ընդունելու այցելութիւնը Թուրքիոյ Հայոց Ամենապատիւ Ս. Գատրիարք Արք. Շնորհք Գալուստեանի նոյ 1 - 4 օրերուն

Սեպտ.ի 11ին քաղաքս այցելեց նաեւ Ս. Էջմիածնայ հոգեւոր մեծաբանի այն առնուան տեսուչը Հոգշ. Տ. Արիս Ծ. Վրդ. Շիրվանեան:

ՖԷՐՄԱՌՈՒՆԹ ՍԷՆԹ ԺԱՅԼԶ ԻՆՍԱՅԹԸՏ ՉԸՐՉԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ:-

Ինչպէս անցեալին այս շրջանին եւս վերոյիշեալ եկեղեցւոյ հովիւ եւ վարչականներուն հետ շարունակուեցան փոխ յարաբերութիւնները: Բանիցս գումարուած խառն ժողովներու ընթացքին նկատի առնուեցան զանազան հարցեր: Մեր եկեղեցւոյ նախկին սեփականատէրերը, որոնք 5 յաջորդական տարիներու համար պայմանագրուած էին միասնաբար գործածելու եկեղեցին, կաւարտի այս տարուան ընթացքին: Եկեղեցւոյ հոգաբարձութեան փափաքաւ եւ նոր համաձայնութեամբ մը յառաջիկայ չորս տարիներու համար որոշուեցաւ կնքել նոր պայմանագրութիւն մը:

ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ:-

Հիւսիսային Ամերիկայի Հայոց. եկեղեցւոյ տարեկան պատգամաւորական ժողովը 1974 Մայիսի առաջին շաբաթավերջին գումարուեցաւ նիւ Շորքի Մայր Տաճարին մէջ: Սոյն ժողովի նիստերուն որպէս եկեղեցւոյս պատգամաւորներ Տորթ. Ա. Կէօնճեան, Տորթ. Յ. Արզումանեան եւ Պրն. Վահէ Բէթլի ներկայ գտնուեցան: Մեր ներկայացուցիչները այս առթիւ մասնաւոր տեսակցութիւն մը ունեցան Առաջնորդ Սրբազան Հօր հետ, որուն ընթացքին նկատի առնուեցան նոր հովիւի պաշտօնի կոչման հարցը

ԳՈՐԾՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ:-

Առաջ. Փոխ. Հայր Սուրբին ջանքերով կատարուեցաւ Կիպրոսի մեր աղետեալ եղբայրներուն օգնութեան արշաւ մը եւ այս առթիւ մեր համայնքին ազգայինները փութացուցին իրենց մասամբ գործածուած իրեղենները, որոնք քաղաքիս Յունաց եկեղեցւոյ կողմէ ուղղարկուեցան՝ դէպի Կիպրոս:

ՏԱՏՈՒՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄԸ :-

1958 թուականին Փարք պողոտայի վրայ Հայ Կեդրոնի մը գնման առթիւ Առաջնորդարանի Տատուրեան հիմնադրամէն կատարուած փոխառութիւնը վերջապէս ամբողջութեամբ -10.000.- վերադարձուեցաւ այս տարուայ վախճանէն առաջ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ :-

Այս մէկ տարուայ ընթացքին եկեղեցւոյս մէջ տեղի ունեցան՝ 40 Մկրտութիւններ, 36 պսակադրութիւններ եւ 15 յուղարկա - Լորութիւններ:

ԱՄԱՐՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ :-

Ժխական Խորհուրդոյս ջանքերով եւ նաեւ Հ.Բ.Ը.Մ. Կեդրոնին քաջալերանքով առաջին անգամ ըլլալով ծեռնարկուեցաւ Ամարնային մամբարի մը որ տեղի ունեցաւ քաղաքիս հայաշատ կեդրոնին մէջ զրտնուող արդիական վարժարանի մը մէջ Յուլիս 15 էն Օգոստոս 23 ի միջեւ 6 շաբաթներու տեւողութեամբ եւ մօտաւորապէս 30 աշակերտներով:

ԳԱՆԱՏԱՆ ԶԱՏ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՑ :-

Այս կապակցութեամբ Առաջ. Սրբազան Հօրմէ ստացուած հրաէրի մը ընդառաջելով տեղի ունեցան 2 խոն ժողովներ:

ա- Անդրանիկ ժողովը զուամարուեցաւ Թօրօնթօյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մէջ Սեպտ. 2, 1975ին որուն կը նախագահէր Գերշ. Տ. Թորգոմ Արք- Մանուկեան: Սոյն ժողովին կը մասնակցէին Թօրօնթօյէ գատ Սէնթ Քաթրինգի եւ Մոնթրէալի ներկայացուցիչները: Եկեղեցւոյս անունով սոյն ժողովին ներկայ գտնուեցան՝ Տորթ. Յ. Արզումանեան, Դ.Դ. Վահէ Բէթլի, Միսաք Կոլտսուզեան եւ Գէորգ Փելթէքեան:

բ- Սոյն հարցով զբաղելու համար իւրաքանչիւր եկեղեցիներու երկուական ներկայացուցներով երկրորդ ժողովը զուամարուեցաւ այս անգամ Սէնթ Գաթրինգի Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ նախագահութեամբ դարձեալ Առաջ. Սրբազան Հօր: Այս ժողովին յանուն մեր եկեղեցւոյ ներկայ գտնուեցան Տիարք Լեւոն Գործեան եւ Վահէ Բէթլի: Այս ժողովը տեղի ունեցաւ Դեկտ. 7, 1974ին:

Վերոյիշեալ գոյգ նիստերու ընթացքին, ընդհանուր առմամբ նըկատի առնուեցան Գանատան անջատ առաջնորդութիւն դարձնելու հարցը:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ :-

Եկեղեցւոյս աւանդական մամոնային դաշտազնացութիւնը տեղի ունեցաւ Օգոստոս 4ին Օնթարիոյի գեղատեսիլ Շարլօթէնպուրկի մէջ, մասնակցութեամբ Տիկնանց եւ Երիտասարդաց մարմիններուն:

Եկեղեցւոյս ենթակայ մարմինները շարունակեցին իրենց օգտաշատ գործունէութիւնները մեծապէս ծառայելով եւ օգտակար հանդիսանալով Ս. Եկեղեցւոյս նիւթական թէ բարոյական գեանի վրայ: Հոս մի առ մի պիտի չի թուենք իւրաքանչիւրի գործունէութիւնները, սրուած ըլլալով որ անոնք անջատաբար պիտի ներկայացնեն իրենց տեղեկատուութիւնները: Դիտի ծանրանանք միայն անոնց որոնք ուղղակի կատարուած են յիսական Խորհուրդոյս կողմէ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱԿԱՋՄՈՒԹԻՒՆ :-

Խորհուրդոյս ջանքերով այս շրջանին մէջ կարելի եղաւ վերակազմել երիտասարդական մարմին մը, որոնք կանոնաւոր կերպով կը շարունակեն իրենց գործունէութիւնները:

ՇԱՐՄՅՈՐԵԱՅ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ :-

Նկեղեցւոյ Շարժօրեայ վարժարանը այս շրջանին մէջ եւս շարունակեց իր օգտաշատ աշխատութիւնները: Այս մէկ օրուայ դպրոցը բաց պահելով իր դռները կը շարունակէ աշակերտութեան ուսուցանել Հայ Կեդուն եւ Հայոց Պատմութիւնը:

Այս տարեշրջանէն սկսեալ վարժարանի պատասխանատուութիւնը սիրայօժար կերպով ստանձնեց Խորհուրդոյ անդամներէն Պրն. Միսաք Կուսուղեան, վարչական գործերուն իրեն. օգնական ունենալով Պրն. Վ. Բէթլին: Ներկայիս վարժարանը կը հաշուէ մօտաւորապէս 125 երկսեռ աշակերտութիւն, բաժնուած 7 դասարաններու մէջ 8 անձնուէր ուսուցիչներու նսկողութեան ներքեւ:

ԲՈՒՐԱՍՏԱՆ :-

Ինչպէս անցեալին այս տարի եւս Նկեղեցւոյ ամսաթերթը կանոնաւորաբար հրատարակուեցաւ շնորհիւ Պրն. Մ. Կուսուղեանի գրլիաւորութեամբ հոյլ մը անձնուէր գործակիցներու:

Ուրախ եւ միանգամայն հպարտ ենք տեսնելով մեր ամսաթերթի ամենուրէջ վայելած սէրն ու յարգանքը:

Այս շրջանին համայնքս ունեցաւ ծանր ու անդարմանելի կորուստ մը յանձին Պ. Արամ Կուսուղեանի որ կնքեց իր մահկանացուն Բուրաստանիպատասխանատու պաշտօնը վերստին ստանձնելու համար տեղի ունեցած ժողովի ընթացքին խոր յուզումի մատնելով բոլոր ժողովականները: Հանգուցեալին Բուրաստանի այսօրուան պատուաբեր դիրքին հասնելու մէջ բերած աշխատանքները միշտ պիտի յիշուին բոլորէն: Յորգանքով անգամ մը եւս կը խոնարհինք իր յիշատակին առջեւ:

ՏԷՊԻՒԹԱՆԹՆԵՐՈՒ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ :-

Նկեղեցւոյ աւանդական Տէպիւթանթներու Պրահանդէսը Յրդ անգամ ըլլալով տեղի ունեցաւ նոյեմբերի 23ին Շաթօ Շամբլէյնի մէջ, արձանագրելով նիւթական շօշափելի յաջողութիւն մը:

ԽՕՍԸ ՇՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ :-

Եխական Խորհուրդս պարտք կը համարէ իր անկեղծ շնորհակալութիւնները յայտնել Հայր Սուրբի գլխաւորութեամբ Նկեղեցւոյ հոգեւորականաց դասուն, քոյր միութեանց, Թէքէեանի Ռատիօժամին, Կոմիտաս Դպրաց Դասուն, Տիկնանց Միութեան, Հիմնադրամի յատուկ մարմնոյն, Տիկնանց Օժանդակին, Երիտասարդաց, Մամիկոնեան Մշակութային, Շարժօրեայ վարժարանին եւ Բուրաստան ամսաթերթի գործակիցներուն, վերջապէս մեր համայնքի իւրաքանչիւր ազգայինին, որոնց բոլորին շնորհիւ կարելի եղաւ այս տարեշրջանին եւս ունենալ որակաւոր աշխատութիւններ ու գործունէութիւններ ի փառս Հայց. Նկեղեցւոյ եւ ի փառս պատուական Հայ ժողովուրդին:

ՃԻՍՏԻՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

1 9 7 4

Անցնող այս մէկ տարուան ընթացքին, իր կոչումին գիտակից Տիկնանց Միութիւնս ծխական Խորհրդոյ Գովանաւորութեան ներքեւ ունեցաւ գործունէութեան բեղուն շրջան մը:

Արդարեւ անդամներու թիւը տարուէ տարի զգալիօրէն աճող մեր կազմակերպութիւնը իր յարաճուն գործունէութեամբ ջանաց օգտակար հանդիսանալ Ս. Եկեղեցւոյս: Համառօտ գիծերով կը կատարենք մեր այս անցնող տարուան ընթացքին կատարուած զանազան գործունէութեանց տեղեկատուութիւնը:

1- ՃԱՇՇԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.-

Բազմաթիւ առիթներով Միութիւնս պատրաստեց ճաշեր որոնցմէ միայն կարելի է յիշել երկու կարեւորները:

Ա- Հոգշ. Տ. Ենորիք Վրդ. Գասպարեանի ժամանման առթիւ:

Բ- Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Ենորիք Արք. Գալուստեանի քաղաքս տուած այցելութեան առթիւ:

2- ԶԱՏԿՈՒԱՅ ՀԱԽԿԻԹՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.-

Երկրորդ անգամն ըլլալով պատրաստուեցան Զատկուայ աւանդական գունաւոր հաւկիթներու զարդարուն կողովիկները, որոնք անգամ մը եւս Եկեղեցւոյս հիմնադրամին ապահովեցին շօշափելի գումար մը:

3- ՏԱՐԵԿԱՆ ՊԱԶԱՐ.-

Միութեանս եւ Եկեղեցւոյս համար այլեւս աւանդութիւն դարձած տարեկան պազարը որ այս անգամ գլեց ու անցաւ իր նախորդները արժանազրեց աննախընթաց յաջողութիւն մը, կրկին Եկեղեցւոյս ապահովելով կոկիկ գումար մը:

4- ԱՆԴԱՄԱԿԱՆ ՀԱԽԱՔՈՅԹՆԵՐ.-

Միութեանս Վարչութիւնը, նկատի ունենալով աւելցող անդամներու թիւը, յաճախակի հաւաքոյթներու կազմակերպութեամբ ջանաց իւրաքամչիւրին զոհացում տալ զանոնք հաւաքելով թէյի սեղաններու շուրջ:

5- ԱՆԴԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ.-

Այս շրջանին մէջ Վարչութիւնս կազմակերպեց նաեւ անդամական շրջապտոյտներ եւ զբօսապտոյտ մը դէպի Գանատայի մայրաքաղաքը, Բէպէքի Մայրաքաղաքը եւ նաեւ դէպի Լորէնշըն Լեոնաշղթաները:

Տիկնանց միութիւնս հաւատարիմ իր ուխտին ջանաց իր կարելին ի գործ դնել օգտակար հանդիսանալու թէ իր անդամներուն եւ թէ իր պատկանած Եկեղեցիին:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ

1 9 7 4

Վարչութիւնս այս տարուան սկզբնաւորութեան շրջանին գործեց հետեւեալ վարչական անդամներով՝

| | |
|-----------------------|----------------|
| Պրն. Մուրատ Թազուրեան | ՝ Ատենապետ |
| Պրն. Յակոբ Յնծալեան | ՝ Փոխ ատենապետ |
| Պրն. Յակոբ Կերիքեան | ՝ Ատենադպիր |
| Պրն. Վարդգէս Պանիրեան | ՝ Գանձապահ |
| Պրն. Ալեաիս Պասմաճեան | ՝ Խորհրդական |

Մինչեւ Հոկտ. 15 թուականը գործող այս վարչութիւնը իր նախորդներուն նման ջանաց եկեղեցւոյ երգեցողութեան ոյժ տալ, կանոնաւորութիւնը պահովել եւ իւրաքանչիւր Կիրակի մասնակի եւ Տաղաւարի, տօնական եւ կարեւոր առիթներով ալ բազմաձայն երգեցողութեամբ բերաւ իր մասնակցութիւնը շենցնելով ու պայծառացնելով մեր սուրբ եկեղեցին:

Հոկտ. 15ին տեղի ունեցած տարեկան ընդհ. ժողովին ընտրուեցաւ նոր վարչութիւն մը ըստ հետեւեալին՝

| | |
|-------------------------|----------------|
| Պրն. Սուրէն Շիրինեան | ՝ Ատենապետ |
| Պրն. Գրիգոր Գանար | ՝ Փոխ ատենապետ |
| Պրն. Անդրանիկ Շիրինեան | ՝ Ատենադպիր |
| Պրն. Վարդգէս Պանիրեան | ՝ Գանձապահ |
| Պրն. Սուքիաս Գումրուեան | ՝ Գոյքապահ |

Եկեղեցւոյս Կոմիտաս Դպրաց Դաս երգչախումբը Պրն. Յակոբ Յնծալեանի ղեկավարութեան տակ բերաւ իր իր մասնակցութիւնը ամբողջ տարուան ընթացքին երգեհոնահար ունենալով: Պրն. Արթուր Միլհէնտիսեանը: Այս վերջնոյն իր ուսումը կատարելագործելու համար Մայր Հայրենիք մեկնելով այժմ իր տեղը գրաւած է Բարեշն. Վարդան Սրկ. Տէօլէքեան: Դպրաց Դասուս ղպրապետի պաշտօնը վարեց Պրն. Կարպիս Կիրակոսեան ամենայն բժախնդրութեամբ եւ լրջութեամբ:

Դպրաց դասըս երգեցողութիւններէ գատ իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Եղեոնի 59րդ տարեդարձի հանդիսութեան, Իւնայդըտ Չըրչի արարողութեան ինչպէս նաեւ կատարուած էկումէնիկական պաշտամունքին:

Այս առիթով Դպրաց Դասուս վարչութիւնը պարտք կը համարէ իր շնորհակալութիւնները յայտնել Հոգ. Տ. Շնորհք Վրդ. Գասպարեանի գլխաւորութեամբ Տ.Տ. Մամիկոն, Սահակ եւ Յուսիկ քահանայ հայրերուն, Սարկաւազաց դասուն, Ղեկավարին, երգեհոնահարին, Դպրապետին, Պատուարժան ծխական Խորհուրդոյ անդամոց, ղիւանապետին վերջապէս բոլոր անոնց, որոնք ղիւրացուցին մեր աշխատանքները:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

1 9 7 4

1974 տարուան ընթացքին Յանձնախումբս կը բաղկանար հետեւեալ անձերէն

| | | |
|------------------------|---|--------------|
| Պրն. Նուրյան Ուզունեան | ՝ | Ատենապետ |
| Պրն. Կարօ Շամլեան | ՝ | Փոխ ատենապետ |
| Տկն. Արաքս Արթինեան | ՝ | Ատենադպիր |
| Պրն. Թազուր Թուճեան | ՝ | Գանձապահ |
| Տկն. Սելմա Քէրլիբեան | ՝ | Խորհրդական |
| Պրն. Վահէ Բէթլի | ՝ | ՝ |
| Պրն. Ռուբէն Արսէվէր | ՝ | ՝ |
| Պրն. Արտաւազ Ստեփանեան | ՝ | ՝ |
| Պրն. Մորայր Արթինեան | ՝ | ՝ |
| Պրն. Յակոբ Ազժորոսեան | ՝ | ՝ |
| Պրն. Վահագն Արապեան | ՝ | ՝ |

Այս տարեշրջանը բացուեցաւ Պատանեկան Գծագրութեան Մրցոյթով մը, որուն մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ ի ներկայութեան Թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք-Մատենեանի:

12 Ապրիլին տեղի ունեցաւ բացումը նկարիչ Ժորժ Բագրամեանի նկարներու ցուցահանդէսին, որ տեւեց 10 օր: Այցելեցին մասնաւորաբար օտար հասարակութիւնը:

24 Ապրիլի եղեոնի Յուշահանդէսին Յանձնախումբս եւս բերաւ իր մասնակցութիւնը թէ զեղարուեստական յայտագրին եւ թէ վիճաքանական ասուլիսին:

26 Մայիսին տեղի ունեցաւ «Նզովբոս» Թատրերգութեան ներկայացումը Նիւ Եորքի Հ.Բ.Ը. Միութեան ՄեհԱն Թատրախումբին կողմէ: Այս ձեռնարկը ամբողջութեամբ կազմակերպուած էր Յանձնախումբիս կողմէ եւ արձանագրեց մեծ յաջողութիւն:

1974 տարուան մշակութային գլխաւոր եղելութիւնն էր Շիրվանզադէի «Նւզինէ» Թատրերգութեան բեմադրութիւնը մեր տեղական լաւագոյն ոյժերով, որ տեղի ունեցաւ 10 նոյ. ին Ութրբմոն Հայսքուլի սրահին մէջ: Այս փիէսը, իր շքեղ ու բծախնդիր բեմադրութեամբ եւ դերակատարներուն անսայթաք խաղարկութեամբը աննախընթաց յաջողութիւն մը արձանագրեց եւ արժանացաւ մեծ գնահատանքի:

1974-ի ընթացքին եւս Յանձնախումբս շարունակեց տարածել հայկական մշակութային հրատարակութիւններ, ծայնապնակներ եւ շնորհաւորական քարտեր: Կը փափաքինք շեշտել, թէ Յանձնախումբս այս աշխատանքները կը կատարէ լոկ հայկական մշակոյթը տարածելու նպատակաւ, եւ ոչ թէ նիւթական շահ ապահովելու համար:

ի դիմաց
 ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ

Ու ունեան

Ա. Ա Գինեան

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՅԱՆՉՆԱՌՈՒՄԲԻ

1 9 7 4

Երիտասարդաց Յանձնախումբս, ծխական Խորհրդոյ կոչին ընդառաջելով Ապրիլ Չին գումարելով ժողով մը ի ներկայութեան 15 անդամ-անդամուհիներու կազմեց իր դիւանը ըստ հետեւեալին՝

| | | |
|------------------------|---|---------------|
| Պրն. Մուրատ Խաչիկեան | ՝ | Ատենապետ |
| Պրն. Անդրանիկ Շիրինեան | ՝ | Փոխ ատենապետ |
| Օր. Սիրուհի Պասմաճեան | ՝ | Ատենադպիր |
| Պրն. Նազարէ՛՛ Սահակեան | ՝ | Փոխ ատենադպիր |
| Պրն. Տիգրան Փափա՛՛թեան | ՝ | Գանձապահ |
| Պրն. Վահագն Արապեան | ՝ | Հաշուապահ |
| Պրն. Ստեփան Սարայլեան | ՝ | Խորհրդական |

Ապրիլէն ասդին Յանձնախումբս իր զանազան ձեռնարկներով ու գործունէութեամբ շանաց երբեմնի երիտասարդաց մարմինը վերականգնել եւ զարկ տալ աշխատութիւններուն կարենալ պատրաստելու համար առողջ երիտասարդութիւն մը հաւաքուած մեր եկեղեցւոյ երդիքին տակ: Սկզբնական շրջանին զանազան ընկերային հաւաքոյթներու կողքին կազմակերպուեցաւ նաեւ Եկեղեցւոյ տարեկան դաշտագնացութիւնը:

Սեպտ. 15ին տարեկան ընդհ. ժողով գումարելով նոր վարչութիւնը գործի լծուած է հետեւեալ կազմով՝ Պ. Մ. Խաչիկեան՝ ատենապետ, Վ. Արապեան՝ փոխ ատենապետ, Օր. Պայծառ Գանար՝ ատենադպիր, Օր. Հիլտա Սրամեան՝ փոխ ատենադպիր, Տ. Փափա՛՛թեան՝ գանձապահ, Ա. Շիրինեան՝ հաշուապահ եւ Բաճի՛՛քի Տիւրէր՝ խորհրդական:

Մեր գործունէութիւնները կարելի է դասաւորել հետեւեալ կերպով՝

- 1- Անդամական հաւաքոյթներ:
- 2- Պարանցիկ Երեկոյթներ:
- 3- Զբօսապտոյտ Թէքեան Զոյր Միութեան երիտասարդներուն հետ Լորէնշընի լեռնաշղթաները:
- 4- Հայաստանն Այսօր նիւթին շուրջ դասախօսութիւն մը Պրն. Վահէ Զէ՛՛թլիի կողմէ:
- 5- Պտոյտ դէպի Էր Գանատայի կառոյցները:
- 6- Ամանորի Պարահանդէս կազմակերպուած Կոմիտաս Երգչախումբին հետ:

Երիտասարդաց Յանձնախումբս նպատակ ունի յառաջիկային աւելի զարկ տալ զանազան գործունէութեանց, մասնաւորաբար կազմակերպելու դասախօսութիւններ որոնք օգտակար պիտի հանդիսանան մեր անդամներուն Հայապահպանման գծով:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
 ԵԿԵՂԵՑԱՄԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

1974

| | <u>Մ Ո Ւ Տ Ք</u> | <u>31.12.74</u> | <u>31.12.73</u> |
|--------------------------|------------------|-----------------|-----------------|
| ճաշերէ | | 1,474.05 | 577.75 |
| Անդամավճարներէ | | 201.00 | 135.00 |
| Նուիրատուութիւններէ | | 290.18 | 135.00 |
| Դրամատան տոկոսէ | | 56.30 | 53.20 |
| Տարեկան Պագարէ | | 3,198.35 | 2,158.16 |
| Զանազանք | | 28.60 | 1.60 |
| Վաճառուած ուտեստեղեններէ | | 179.50 | - - - |
| Զքօսապտոյտներէ | | 990.65 | - - - |
| ՏԱՐԻՈՑ ԵԿԱՄՈՒՏ | | <u>6,418.63</u> | <u>3,060.71</u> |
| Պատրաստ գումար Յուն.1ին | | 2,331.16 | 2,676.88 |
| | | <u>8,749.79</u> | <u>5,737.59</u> |

| | <u>Ե Լ Ք</u> | | |
|---------------------------|--------------|-----------------|-----------------|
| ճաշերու | | 1,106.89 | 320.27 |
| Տարեկան Պագարի | | 779.80 | 297.18 |
| Զանազանքի | | - - - | 79.32 |
| Ընդունելութիւններու | | 592.19 | 79.71 |
| Երուսաղէմի | | 30.00 | 30.00 |
| Ճիսական Խորհուրդոյ | | 1,000.00 | 1,900.00 |
| Պարտքի Շիջման Հիմնադրամին | | - - - | 700.00 |
| Զքօսապտոյտներու | | 706.50 | - - - |
| ՏԱՐԻՈՑ ԵԼՔ | | <u>4,215.38</u> | <u>3,406.43</u> |
| Պատրաստ գումար Դեկտ. 31ին | | 4,534.41 | 2,331.16 |
| | | <u>8,749.79</u> | <u>5,737.59</u> |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
 ԿՈՄԻՏԱՍ ԴԳՐԱՑ ԴԱՍՈՒ
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

1 9 7 4

| <u>Մ Ո Ւ Տ Ք</u> | <u>31.12.74</u> | <u>31.12.73</u> |
|-------------------------|-----------------|-----------------|
| Պնակի հատյժներէ | 1,151.25 | 713.48 |
| Նուիրատուութիւններէ | 1,718.75 | 275.00 |
| Դրամատան տոկոսէ | 37.80 | --- |
| ՏԱՐԻՈՅ ԵԿԱՄՈՒՏ | <u>2,907.80</u> | <u>988.48</u> |
| Պատրաստ գումար Յուն 1ին | 958.65 | 149.05 |
| | <u>3,866.45</u> | <u>1,137.53</u> |

| <u>Ե Լ Ք</u> | | |
|-----------------------------|-----------------|-----------------|
| Չանագան ծախսերու | 738.28 | 178.88 |
| Նուիրատուութիւն հիմնադրամին | 500.00 | --- |
| Փոխան ցուած ճխ. Թորհուրդին | 500.00 | --- |
| ՏԱՐԻՈՅ ԵԼՔ | <u>1,738.28</u> | <u>178.88</u> |
| Պատրաստ գումար Դեկտ. 31ին | 2,128.17 | 958.65 |
| | <u>3,866.45</u> | <u>1,137.53</u> |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
 ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱՌԻՄՔԻ
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

1974

| <u>Մ Ո Ւ Տ Ք</u> | <u>31.12.74</u> | <u>31.12.73</u> |
|-----------------------------|-----------------|-----------------|
| Նուիրատուութիւններէ | 80.00 | 265.00 |
| Վաճառուած գիրք եւ ձայնապնկ. | 712.30 | 519.00 |
| Վաճառուած Շնորհ. քարտերէ | 36.25 | 122.65 |
| Եջովագրութիւններկ. գուտ շահ | 608.00 | --- |
| Ենթահանձնի ներկ. գուտ շահ | 1,045.16 | --- |
| | <hr/> | <hr/> |
| ՏԱՐԻՈՅ ՄՈՒՏՔ | 2,481.71 | 906.65 |
| Պատրաստ գումար Յուն 1ին | 315.92 | 297.56 |
| | <hr/> | <hr/> |
| | 2,797.63 | 1,204.21 |

| <u>Ե Լ Ք</u> | | |
|-----------------------------|----------|----------|
| Նուիրատուութիւն հիմնադրամին | 300.00 | 200.00 |
| Փոխանձուած ծխ. Խորհուրդին | 500.00 | --- |
| Նուիրատուութիւն Բուրաստանին | 25.00 | --- |
| Նուիր. Պոլսոյ Պատրիարք. | 50.00 | --- |
| Ջանազան գիրքերու | 783.63 | 275.04 |
| Քարտերու տպագրութեան | --- | 367.00 |
| Ջանազանք | 54.24 | 46.25 |
| | <hr/> | <hr/> |
| | 1,712.87 | 888.29 |
| ՏԱՐԻՈՅ ԵԼՔ | | |
| Պատրաստ գումար Դեկտ. 31ին | 1,084.76 | 315.92 |
| | <hr/> | <hr/> |
| | 2,797.63 | 1,204.21 |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
 ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
 1 9 7 4

| <u>Մ Ո Ւ Տ Ք</u> | <u>31.12.74</u> |
|-------------------------|-----------------|
| Տարեկան դաշտագնացութենէ | 941.85 |
| Հանդիսութիւններէ | 1,593.43 |
| Նուիրատուութիւններէ | 10.00 |
| Զանազանք | 169.74 |
| ՏԱՐԻՈՅ ՄՈՒՏՔ | 2,715.02 |

| <u>Ե Լ Ք</u> | |
|---------------------------|-----------------|
| Տարեկան դաշտագնացութեան | 563.12 |
| Հանդիսութիւններու | 1,326.71 |
| Նուիր. Պոլսոյ Պատրիարք.ին | 50.00 |
| Զանազանք | 207.77 |
| ՏԱՐԻՈՅ ԵԼՔ | 2,147.60 |
| Պատրաստ գումար Դեկտ.31ին | 567.42 |
| | 2,715.02 |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
 ՊԱՐՏՔԻ ՇԻՋՄԱՆ ՄԱՐՄՆԻ
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1974

| <u>Մ Ո Ւ Տ Ք</u> | <u>31.12.74</u> | <u>31.12.73</u> |
|--------------------------|-----------------|-----------------|
| Պարահանդեսի Ցանձ.էն | 4,000.00 | - - - |
| Վարձք ԻԼՆայթըտ Չըրչէ | 5,000.00 | 5,000.00 |
| Նուիրատ. եւ Պարահանդեսէ | 8,807.00 | 10,639.00 |
| Դրամատան տոկոսէ | 513.28 | 425.02 |
| Վարձք Հ.Բ.Ը.Միուլթենէ | 1,000.00 | 1,000.00 |
| Եկեղեց. հին նստարաններէ | - - - | 1,000.00 |
| Կոմիտաս Դպրաց Դասէ | 500.00 | - - - |
| Ջառկուլայ հաւկիթներէ | - - - | 2,500.00 |
| Եկեղ. Տիկնանց Միուլթենէ | - - - | 700.00 |
| Փոխանցուած ազգ. կալուածէ | 20,000.00 | - - - |
| Մամիկոնեան Մշակ.Ցանձ.է | 300.00 | - - - |
| | <hr/> | <hr/> |
| ՏԱՐԻՈՅ ՄՈՒՏՔ | 40,120.28 | 21,264.02 |
| Պատրաստ գումար Յուն.1ին | 7,426.73 | 9,611.08 |
| | <hr/> | <hr/> |
| | 47,547.01 | 30,875.10 |

| <u>Ե Լ Ք</u> | | |
|------------------------------|-----------|-----------|
| Կալուածի պարտքի վճարում | 12,500.00 | 12,500.00 |
| Կալուածի պարտքի տոկոս | 6,703.13 | 7,515.63 |
| Նորոգութիւններու | - - - | 431.74 |
| Դրամատան ծախսերու | 1.31 | 1.00 |
| Եկ. Խորհ.ինձիլիան անդամատրք. | - - - | 2,600.00 |
| Փոխան քարտ. ծախսի | 1,000.00 | 400.00 |
| Հանրի Պուրասա հողի տուրք | 1,340.21 | - - - |
| | <hr/> | <hr/> |
| ՏԱՐԻՈՅ ԵԼՔ | 21,544.65 | 23,448.37 |
| Պատրաստ գումար Դեկտ. 31ին | 26,002.36 | 7,426.73 |
| | <hr/> | <hr/> |
| | 47,547.01 | 30,875.10 |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՆԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
 ՃԻՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՀԱՇՈՒՆՏՈՒՈՒԹՅՈՒՆ

1974

| <u>Մ Ո Ւ Տ Ք</u> | <u>31.12.74</u> | <u>31.12.73</u> |
|------------------------------|-------------------|------------------|
| Եկեղեցւոյ հասոյթներէ | 11,462.80 | 7,412.40 |
| Եկեղեցւոյ կալուածէն | 1,295.00 | 1,780.00 |
| Բուրաստան ամսաթերթէն | 3,230.00 | 3,111.50 |
| Շաբաթօրեայ վարժարանէն | 8,640.10 | 6,598.77 |
| Խորհրդակատարութիւններէ | 6,205.00 | 5,530.00 |
| Զանազան գործունէութիւններէ | 1,277.94 | 872.46 |
| Անդամավճարումներէ | 660.00 | 3,485.00 |
| Նուիրատուութիւններէ | 16,079.86 | 13,433.50 |
| Պատի Օրացոյցէ | 1,290.00 | 589.00 |
| Եկեղ. Տիկնանց Միութենէ | 1,000.00 | 1,900.00 |
| Պարահանդէսի Յանձ.է | 1,000.00 | 8,300.00 |
| Հ.Բ.Ը.Մ. Մասնաճիւղէ | - - - | 1,000.00 |
| Հ.Բ.Ը. Ամենօրեայ դպրոցէ | 1,500.00 | 1,000.00 |
| Փոխան քարտուղարական ծախս. | 1,000.00 | 400.00 |
| Երիտասարդաց Յանձ.էն | - - - | 689.09 |
| Դրամատան Տոկոսէ | 541.99 | - - - |
| Հողի վաճառումէն | 42,300.00 | - - - |
| Կոմիտաս Դպրաց Դասէն | 500.00 | - - - |
| Մամիկոնեան Մշակ.Յանձ.էն | 500.00 | - - - |
| Պոլսոյ Պատրիարք.պահեստի | 4,925.00 | - - - |
| ՏԱՐԻՈՅ ՄՈՒՏՔ | <u>103,407.69</u> | <u>56,099.72</u> |
| Պատրաստ գումար Յուն. 1ին | (39.60) | 8,100.71 |
| | <u>103,368.09</u> | <u>64,200.43</u> |
| <u>Ե Լ Ք</u> | | |
| Եկեղեցւոյ ընդհ. ծախսերու | 15,951.63 | 15,723.47 |
| Եկեղեցւոյ կալուածին | 15,780.11 | 17,411.82 |
| Բուրաստան ամսաթերթին | 3,857.50 | 3,304.55 |
| Շաբաթօրեայ վարժարանին | 6,786.74 | 7,100.00 |
| Խորհրդակատարութեանց | 3,453.15 | 1,757.20 |
| Գործունէութեանց | 1,081.96 | 759.46 |
| Պատի Օրացոյցի | 1,050.00 | 865.00 |
| Դրամատան տոկոս եւ ծախս. | - - - | 1,546.62 |
| Առաջնորդարանի տուրքի | - - - | 5,471.91 |
| Պարտքի վճարում Փարք Գողոտ.ի | 14,700.00 | 10,300.00 |
| Պարտքի վճարում Տատուրեան հիմ | 10,000.00 | - - - |
| Փոխանցում ՇԼՂման Մարմնի | 20,000.00 | - - - |
| ՏԱՐԻՈՅ ԵԼՔ | <u>92,661.09</u> | <u>64,240.03</u> |
| Պատրաստ գումար Դեկտ.31ին | <u>10,707.00</u> | <u>(39.60)</u> |
| | 103,368.09 | 64,200.43 |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

ՃԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Խ

1975

Մ Ո Ւ Տ Ք

| | <u>1974</u> <u>Նախահաշիվ</u> | <u>1974</u> <u>Կատարուած</u> | <u>1975</u> <u>Նախահաշիվ</u> |
|----------------------------|---------------------------------|---------------------------------|---------------------------------|
| Կանխիկ ի ձեռին | | | 10,700 |
| Եկեղեցւոյ պնակէ | 8,500 | 8,500 | 9,000 |
| վարձք Ամենօրեայ դպրոցէ | 1,000 | 1,500 | - - - |
| վարձք Հ.Բ.Ը.Միուլթենէ | 1,500 | - - - | 3,000 |
| վարձք սրահներէ | 1,500 | 1,300 | 1,500 |
| Անդամավճարներէ | 2,500 | 700 | 1,000 |
| Նուիրատ. Իւղազին | 2,000 | 3,000 | 3,000 |
| Նուիրատ. Զանազան | 11,000 | 16,100 | 14,000 |
| Խորհրդակատարութիւններէ | 5,500 | 6,200 | 6,000 |
| Ձեռնարկ-Պարահանդէսներէ | 6,500 | 1,000 | 5,000 |
| Եկեղեցասէր Տիկնանց Մարմինէ | 1,000 | 1,000 | 2,000 |
| Կոմիտաս Դպրաց Դասաէ | 1,000 | 500 | 1,000 |
| Տարեկան զբօսապտոյտէ | 500 | 1,300 | 1,500 |
| Պատի օրացոյցէ | 1,500 | 1,300 | 1,300 |
| Շաբաթօրեայ դպրոցի ամսավճ. | 6,000 | | 5,500 |
| Շաբաթօրեայ դպրոցի ձեռքանկ. | 2,000 | 8,600 | 1,000 |
| Բուրաստան Ամսաթերթէ | 3,500 | 3,200 | 3,500 |
| Հիմնադր. քարտ. ծախսի փոխ. | 500 | 1,000 | 1,000 |
| Երիտասարդաց Յանձ.է | - - | - - | 500 |
| Հողի վաճառումէ | 45,000 | 42,300 | 52,000 |
| Պոլսոյ Պատրիարք. Նուիրատ. | - - | 4,900 | - - |
| Մամիկոնեան Նշակ.Յանձ.է | - - | 500 | 500 |
| Դրամատան տոկոսէ | - - | 500 | 500 |
| | <u>101,000</u> | <u>103,400</u> | <u>123,500</u> |
| | == == = | == == = | == == = |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ՆԻՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ

Հ Ա Շ Ո Ւ Ի Ե Կ Շ Ի Ը

1975

Ե Լ Բ

| | <u>1974</u> <u>Նախահաշիվ</u> | <u>1974</u> <u>Կատարուած</u> | <u>1975</u> <u>Նախահաշիվ</u> |
|--------------------------------|---------------------------------|---------------------------------|---------------------------------|
| Եկեղեց. կալուածի ծախք. | 15,500 | 19,800 | 22,000 |
| Առաջնորդարանի տուրք | 4,500 | -- | 8,000 |
| Հովիւ եւ դիւանապետութեան | 17,500 | 12,000 | 19,000 |
| Ձեռնարկներու | 1,000 | 1,100 | 1,000 |
| Խորհրդակատարութեանց | 2,000 | 3,400 | 3,500 |
| Շաքաթօրեայ վարժարանին | 8,000 | 6,800 | 7,000 |
| Բուրաստան Ամսաթերթին | 3,500 | 3,800 | 4,000 |
| Օրացոյցին | 1,000 | 1,000 | 1,000 |
| Դրամատան տոկոսի | 500 | -- | -- |
| Պարտքի վճարում | 14,700 | 24,700 | 35,000 |
| Ազգապատկան հողէն Հիմնադրամին | -- | 20,000 | 17,000 |
| Պոլսոյ Պատրիարքութեան | -- | -- | 4,900 |
| | <u>78,200</u> | <u>92,700</u> | <u>122,400</u> |
| Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի | | | 1,100 |
| | | | <u>123,500.-</u> ===== |

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Հ Ա Շ Ո Ւ Ե Ա Ր Դ Ա Ր

31 Դեկտեմբեր 1974

ԸՆԹԱՑԻԿ

Ի Ն Չ Ք

| | | | |
|----------------|----------------|-----------|-----------|
| Պատրաստ գումար | ՀԻՄՆԱԴՐԱՄԻ | 26,002.36 | |
| | Եկեղ. Տիկնանց | 4,534.41 | |
| | Կոմիտաս Դպրաց | 2,128.17 | |
| | Մամիկոնեան Մշ. | 1,084.76 | |
| | Ճիս. ԽՈՐՀՈՒՐԴ | 10,707.00 | |
| | Պարահ. Յանձ. | 9,934.00 | |
| | Երոտասարդաց | 567.42 | |
| | | | 54,958.12 |

ՀՈՂ ԵՒ ԿԱՆՈՒՄԸ (Թիման գինով)

| | | | |
|-------------------------|-----------|-----------|------------|
| Հանրի Գուրասայի հողամաս | , | 48,750.- | |
| Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղ. | 250,000.- | | |
| Յաւելլլւմ | 14,315.- | 264,315.- | 313,065.- |
| | | | 368,023.12 |
| | | | ===== |

ՊԱՐՏՔ ԵՒ ՋՈՒՏ ԱՐԺԷՔ

ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏՔԵՐ

| | | |
|----------------------------|----------|----------|
| Եկեղեցւոյ տարեկան շիջում | 12,500.- | |
| Ընթացիկ պարտքեր 974 մնացած | 11,500.- | 24,000.- |

ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐՏՔ

| | | |
|-------------------------------|----------|-----------|
| Եկեղ. վճարում (6½ տոկոս տար.) | 81,250.- | |
| Հ.Բ.Ը.Մ. առանց տոկոսի | 35,000.- | 116,250.- |

ՋՈՒՏ Ա Ր Ժ Է Ք

| | | |
|-------------------------------|------------|------------|
| Ս. Գր. Լուսաւորիչ Մայր Տաճարի | 227,773.12 | |
| | | 368,023.12 |
| | | ===== |

Ընտրողակն Յանձնախումբին կողմէ պատրաստուած
ծխական Խորհրդոյ ընտրուելիք Հինգ անդամոց թեկնա-
ծուներու երկպատիկ ցանկ զրուած Այբբենարանի կար-
գով:

- 1- Ազնւիտիւր Վահագն
- 2- ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ Յարութիւն Տոբթ-
- 3- ԲԵԼԹԷՔԵԱՆ Գէորգ
- 4- ԳՈՐԾԵԱՆ ԼԵԼՈՆ
- 5- ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Նուպար
- 6- ԶԱՖԻՐԵԱՆ Արամ
- 7- ԷՃԻՏԵԱՆ Միհրան
- 8- ԷՍԷՆ Պերժ
- 9- ՊԱԼԵԱՆ Օսնիկ
- 10- ՏԻԳՐԱՆԵԱՆ Գրիգոր